А.С. ТАДЕВОСЯН

ПРОБЛЕМА ФИНАНСИРОВАНИЯ АРМЯНСКИХ ПОЛИТИЧЕСКИХ ПАРТИЙ НАКАНУНЕ ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЫ

При изучении истории партий всех времен важно выяснить источники их финансирования и вопросы распределения. Эта проблема имела важное значение накануне Первой мировой войны при получении оружия в целях самообороны.

Целью данной статьи является выяснение финансовых возможностей армянских политических партий накануне Геноцида, анализ и раскрытие реальной картины использования этих финансовых средств для приобретения оружия.

Ключевые слова: сбор пожертвований, насильственный сбор пожертвований, финансовый отчет, приобретение оружия, финансовая стабильность, распределение ресурсов, проблема самообороны.

A.S. TADEVOSYAN

PROBLEM OF FINANCING OF ARMENIANS POLITICAL PARTIES ON THE EVE OF THE FIRST WORLD WAR

When studying the history of parties at all times, it is important to clarify their financing sources and distribution issues. The problem was of great significance on the eve of World War I at aquiring weapon for the purpose of self-defense.

The aim of this article is to clarify the financial opportunities of the Armenian political parties on the eve of the Genocide, to analyze and reveal the real picture of the use of these financial means to acquire weapon.

Keywords: donation, violent donation, financial report, aquiring weapon, financial stability, distribution of material resources, problem of self-defense.

ՀՏԴ 330.101:338.24.021.8

Մ.Կ. ԱՂԱՅԱՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՖՈՐՄԱՑԻԱՅԻՑ ՄՈԴԵՌՆԱՑՄԱՆՆ ԱՆՑՆԵԼՈՒ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

Դիտարկվում են տնտեսության տրանսֆորմացիա և մոդեռնացում հասկացությունները, առանձնացվում են տրանսֆորմացիայից մոդեռնացմանն անցման նախադրյալները և տնտեսության մոդեռնացման գործընթացի բաղադրիչները: Տնտեսության տրանսֆորմացիայից մոդեռնացմանն անցումը նշանակում է պետության պատասխանատվության շրջանակների ընդլայնում, ինչն էլ իր հերթին ենթադրում է ինովացիոն ինստիտուցիոնալ միջավայրի ստեղծում:

Առանցքային բառեր. տրանսֆորմացիա, մոդեռնացում, ազգային տնտեսություն, ինստիտուտ, ինովացիոն ինստիտուցիոնալ միջավայր, մրցակցություն, պետություն-մասնավոր հատված, համաշխարհային տնտեսություն:

Հետխորհդային երկրների տնտեսական զարգացման ներկայիս փուլը հաճախ ներկայացվում է որպես անցում տնտեսության տրանսֆորմացիայից տնտե-

սության մոդեռնացմանը, որին բնորոշ է ազգային տնտեսությունների մրցունակության բարձրացումը, ինովացիոն տնտեսության ուժեղացումը[1]: Խոսքը վերաբերում է այնպիսի տնտեսությանը, որին բնորոշ են ինչպես տարբեր նպատակներ, բազմաբնույթ գործիքներ, այնպես էլ մակրոտնտեսական անկայունությունն ու դրա պատճառների տարբեր մեկնությունները: Տեղի ունեցող փոխակերպությունները հանգեցնում են պետության դերի փոփոխությանը, որի արդյունքում ընդլայնվում են նրա պատասխանատվության գոտիները: Այս երևույթը հատկապես դրսևորվում է տնտեսական անկայունության պայմաններում, երբ մի կողմից՝ անհրաժեշտություն է դառնում պետության դերի ուժեղացումը, մյուս կողմից՝ ներկա պայմաններում տեղի է ունենում պետության դերի թուլացում: Որքան էլ մեծ լինի պետական միջամտության դերը, չի կարելի հաշվի չառնել այն, որ պետությունը, լինելով շուկան կարգավորող ինստիտուտ, ենթադրում է մի շարք ռիսկեր՝ լինեն դրանք քաղաքական, թե ինստիտուցիոնալ: Այս հակասական իրավիճակը բացատրելու նպատակով տնտեսագետներն օգտագործում են «տրանսֆորմացիա» եզրույթը: «Տրանսֆորմացիա» կատեգորիայի ավանդական մեկնությունները հիմնականում բացառում են երկարաժամկետ փոփոխությունների տևական գործընթացները: Այս առումով ենթադրվում է ամբողջ համակարգի կառուցվածքի որակական փոփոխությունը, ինչպես նաև այդ համակարգը կազմող տարրերի, դրանց վերարտադրման մեխանիզմների կառուցվածքային փոփոխությունները, որոնք, ի վերջո, ոչնչացնում են համակարգային ֆունդամենտը: Այստեղ արդեն գործ ունենք մոդեռնացման հետ, որը, ըստ էության, անցումային փուլ է համակարգային տրանսֆորմացիաների միջև, երբ կուտակված փոփոխությունները թույլատրում են լավարկել համակարգի վիճակը, ինչը հետագայում ստեղծում է մեծ պոտենցիալ՝ զարգացման ավելի բարձր մակարդակի անցնելու համար: Փաստորեն, խոսքը վերաբերում է մոդեռնացման միջոցով էվոլյուցիոն փոխակերպումներին ու դրանց իրագործմանը: Այսպիսով, մոդեռնացումը լայն իմաստով կարելի է սահմանել որպես կոորդինացված ջանքեր՝ հետինդուստրիալ միջավայրում ազգային մրցունակության ձեռքբերման համար: Ելնելով սրանից, կարող ենք փաստել, որ առկա է որոշակի հակասություն մոդեռնացման նպատակների ու դրանց հասնելու միջոցների միջև: Բանն այն է, որ տնտեսության տարբեր սուբյեկտների շահերի միջև միշտ էլ կա կոնֆլիկտ, մասնավորապես, խոսքը վերաբերում է մոդեռնացման հասարակական շահերի և բիզնեսի մասնավոր շահերի միջև առկա հակասությանը:

Այս առումով հարկ է առանձնացնել տնտեսական մոդեռնացման գործընթացի հետևյալ բաղադրիչները.

-համակարգային մոդեռնացում, որը ենթադրում է ազգային տնտեսական համակարգերի գործունեության հիմնական սկզբունքների նորացում,մասնավորապես՝ տնտեսության կազմակերպման հիմնարար սկզբունքերի կատարելագործում, ինչպես, օրինակ, մրցակցային միջավայրի զարգացում, տնտեսական գործընթացների ազատականացում, մասնավոր ձեռնարկատիրական նախաձեռնության խրախուսում, տնտեսության ապաբյուրոկրատացում և այլն.

-կառուցվածքային մոդեռնացում, որն իրականացվում է կոնկրետ ոլորտներում պետական կարգավորման մեթոդներով, ինչպես, օրինակ, արդյունաբերական և ինովացիոն- կառուցվածքային քաղաքականության դաշտը: Սա էլ, թերևս, պայմանավորում է այն խնդիրները, որոնք կապված են ազգային տնտեսությունների և ՀՆԱ-ի կառուցվածքի օպտիմալացման հետ՝ ուղղված հումքային կողմնորոշման նվազմանը, պրոգրեսիվ (ինովացիոն) ճյուղերի մասնաբաժնի մեծացմանը.

-ինստիտուցիոնալ մոդեռնացում, որը ներառում է իրացման երկու մակարդակ.

ա. *տնտեսական համակարգերի ինստիտուտների կառուցվածքային դիֆերենցում*, այսինքն՝

-շուկայական տնտեսության նոր ազգային ինստիտուտների ձևավորում, որոնք ունեն որոշակի գործառույթ և սերտորեն փոխկապված են միմյանց, օրինակ՝ պետություն- մասնավոր համագործակցության ինստիտուտը,

-արդեն գործող ինստիտուտների զարգացում այնպես, որ տնտեսական համալիրում բարձրանա դրանց դերը մինչև այնպիսի մակարդակի, որը համարժեք է մոդեռնացման ժամանակակից պայմաններին, ընդ որում, միաժամանակ արգելափակվում են ինստիտուցիոնալ խոչընդոտները,

բ. *արտադրողական ուժերի տեխնոլոգիական և արդյունաբերական մոդեռնացում*, որը ենթադրում է ազգային տնտեսությունների տեխնոլոգիական զարգացման մակարդակի բարձրացում, «նոր տնտեսության» ճյուղերի զարգացում, տնտեսության իրական հատվածի հիմնական ֆոնդերի նորացում, ՀՆԱ-ի էներգա- և նյութատարության իջեցում, տնտեսավարող սուբյեկտների ինվեստիցիոն ակտիվության աշխուժացում:

Մոդեռնացում տնտեսական երևույթը, բնականաբար, ունի որոշակի նախադրյալներ, մասնավորապես՝ պատճառահետևանքային, տնտեսական իրավիճակի պայմանները, որոնք օբյեկտիվորեն պայմանավորում են տնտեսական գործընթացների հիմնական բնութագրիչների փոփոխությունները: Այս առումով առանձնացվում են հետևյալ բլոկները[2].

1.ինստիտուցիոնալ, որը ենթադրում է շուկայական սկզբունքի վրա գործող տնտեսության ինստիտուցիոնալ-իրավական հիմքերի ամբողջականացման ապահովում, ապրանքնային և գործոնային շուկաների, ինչպես նաև շուկայական ինֆրակառուցվածքի բոլոր տարրերի ձևավորում (բանկային և հիպոթեքային վարկավորում, ապահովագրություն, աուդիտ, քոնսալթինգ և այլն): Այլ խոսքով, հաջողելու և մրցակցության մեջ շահելու համար անհրաժեշտ է հաշվի առնել տնտեսաքաղաքական խաղի ձևավորված բոլոր կանոնները՝ առաջին հերթին իր բարձրակարգ, գիտատար տեխնոլոգիաներով,

2.մակրոտնտեսական, որը ենթադրում է ինֆլյացիայի կրճատում, ՀՆԱ-ի փողայնացման գործակցի բարձրացում, հարկային բեռի կրճատում, տնտեսական աճի կայուն տեմպեր, բոլոր տնտեսական սուբյեկտների, առաջին հերթին՝ պետության, ինվեստիցիոն ակտիվության բարձր դինամիկա,

3.ֆինանսական, որը նշանակում է հայրենական արդյունաբերական և ֆինանսական կապիտալի կուտակում, արտասահմանյան ինվեստիցիաների ներհոսք,

4.սոցիալական, որը ենթադրում է մարդկային կապիտալի որակի բարձրացում, բնակչության շուկայական հոգեկերտվածքի, ձեռնարկատիրական ակտիվության ձևավորում և այլն:

Անցումը տնտեսության տրանսֆորմացիայից մոդեռնացմանը նշանակում է պետության պատասխանատվության շրջանակների ընդլայնում, ինչն էլ իր հերթին ենթադրում է ինովացիոն ինստիտուցիոնալ միջավայրի ստեղծում: Արդյունքում տեղի է ունենում ձեռնարկատիրության խթանում, տնտեսության մեջ կապիտալի ներգրավում, ինովացիոն տեխնոլոգիական հիմքի վրա տնտեսության դիվերսիֆիկացում, աշխատանքի միջազգային բաժանման մեջ երկրի մրցունակության արդյունավետության բարձրացում: Այս ամենն արդեն հանգեցնում են երկրի արտաքին տնտեսական դիրքերի ամրապնդմանն ու ընդլայնմանը, և, ըստ էության, անցում է կատարվում ազգային տնտեսության տարածական զարգացման նոր հաշվեկշռված մոդելին, որտեղ միմյանց հետ սերտորեն փոխգործում են տարբեր ինստիտուցիոնալ սուբյեկտներ (պետություն, գործարար աշխարհ, գիտական, հետազոտական, ֆինանսական ինստիտուտներ և այլն), որոնք նպատակ ունեն՝ ստեղծելու մրցունակ, ինովացիոն իմաստով կենսունակ կառույցներ: Այլ խոսքով, ապահովելով տնտեսության ճյուղային կառուցվածքային տեղաշարժեր, միաժամանակ ընդլայնվում է պետության օժանդակությունը:

Համաշխարհային տնտեսության մեջ գործող կանոնները վաղուց արդեն ինստիտուցիոնալացված են, որոնք որոշակի ազդեցություն են թողնում առան-

ձին ազգային տնտեսությունների մրցակցային վարքագծի վրա: Անցումը մոդեռնացմանը ենթադրում է ռեսուրսային և ինստիտուցիոնալ այնպիսի հիմքի ձևավորում[3], որը ենթադրում է պետություն-մասնավոր հատվածի արդյունավետ համագործակցություն, մասնավոր նախաձեռնության և մրցակցության ընդլայնում, սեփականության իրավունքների պաշտպանվածություն, կոռուպցիայի մակարդակի իջեցում, օրինականության ամրապնդում, պետական կառավարման որակի բարելավում: Այլ խոսքով, տեղի է ունենում պետության պատասխանատվության գոտու տրանսֆորմացիա, տնտեսության մեջ սիներգիական արդյունքի ստեղծում, որն ապահովում է տնտեսական զարգացման բարձր մակարդակ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Сатаров Г.** Российская модернизация в контексте // Вопросы экономики.-2011.- N 5.- С. 23-35.
2. **Рустамов Э.** Принципы эволюционной модернизации переходных экономик // Вопросы экономики.-2009.-N 7.- С. 78-92.
3. **Калинин А,** Построение сбалансированной промышленной политики: Вопросы структурирования целей, задач, инструментов //Вопросы экономики.-2012.- N 4.- С. 132.

М.К. АГАЯН

О ПЕРЕХОДЕ ЭКОНОМИКИ ОТ ТРАНСФОРМАЦИИ К МОДЕРНИЗАЦИИ

Рассматриваются понятия трансформации и модернизации экономики. Выделены предпосылки перехода от трансформации к модернизации и составляющие процесса модернизации экономики. Переход от экономических преобразований к модернизации означает расширение обязанностей правительства, что, в свою очередь, предполагает создание инновационной институциональной среды.

Ключевые слова: трансформация, модернизация, национальная экономика, институт, инновационная институциональная среда, соревнование, государство-частный сектор, мировая экономика.

M.K. AGHAYAN

THE TRANSITION OF THE ECONOMY FROM TRANSFORMATION TO MODERNIZATION

Economic transformation and modernization concepts are considered. The prerequisites of transition from transformation to modernization, and the elements of the economy's modernization process are distinguished. Transition of the economy from transformation to modernization means a higher responsibility for the state, which in its turn, supposes establishment of an innovative institutional environment.

Keywords: transformation, modernization, national economy, institute, innovative institutional environment, competition, state-private sector, world economy.